ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

03.03.2025 թվականին կնքված **N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-25/08-1** գնման պայմանագրի

ք. Երևան «31» 03 2025թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ՝ Բ. Սեդրակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Պողոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 03.03.2025թ. կնքված N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-25/08-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 7.5 և 7.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հատկացված **1,399,978.00 (մեկ միլիոն երեք հարյուր իննսունինը հազար ինը հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ն (Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող)** շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Հաստատել Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

## 2. *Այլ պայմաններ*

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 78 | Մովսես Խորենացի 160/2 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Էրեբունի մասնաճյուղ |
| Հ/Հ 1570083324940100 | Հ/Հ 163068101498 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 00402803 |
| Գլխավոր տնօրենի ժ/պ _______ Բ. Սեդրակյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն _______ Հ. Պողոսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«03» մարտի 2025թ. կնքված*
*N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-25/08-1 ծածկագրով պայմանագրի*
*«31» ____03____ 2025թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Ծառայության անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-2026թթ.՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2025թ. | | | | | | | | | | | | 2026թ. | Ընդհանուր գինը |
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | I-XII | |
| 1 | 90921200/501 | Դեզինսեկցիոն ծառայություն | դրամ | 1 | - | - | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 | 1,399,978.00 |
| **Ընդամենը՝** | | | | | | | | | | | | | | | | | | **1,399,978.00** |

* Ծանոթություն. Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

Գլխավոր տնօրենի ժ/պ ---------- Բ. Մեղրակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ախտահանման կենտրոն» ՓԲԸ
Մովսես Խորենացի 160/2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Էրեբունի մասնաճյուղ
Հ/Հ 163068101498
ՀՎՀՀ 00402803

Տնօրեն ---------- Հ. Միրոյան
(ստորագրություն)
Կ.Տ.